ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2023թվականի N 020-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերի, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է***՝

Տալ համաձայնություն՝

1. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.40049 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-004-0149-0050. , հողատեսքը՝ խոտհարք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ համայնքում էքստրեմալ տուրիզմի ներդրման և զարգացման նպատակով:

2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01564 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-004-0150-0015 , հողատեսքը՝ արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ համայնքում էքստրեմալ տուրիզմի ներդրման և զարգացման նպատակով:

3. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ալբերտ Սարիբեկի Կանդալյանին սեփականության իրավունքով պատկանող 0.5079հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-025-0111-0102, հողատեսքը՝ այլ) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական

նշանակության՝ մինչև 100 000խմ ծավալով կաթիլային ոռոգման ջրամբարի կառուցման նպատակով:

4. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Աննա Ռուբիկի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.6695հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-025-0111-0105, հողատեսքը՝ այլ) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ մինչև 100 000խմ ծավալով կաթիլային ոռոգման ջրամբարի կառուցման նպատակով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ